



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌԵԽԵ Լ. ՏԱՐԻ

ՀԱՄԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՄԱՅԻՍ 1897 թ.

ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԻ ԴԵՐԱԿԱՆ ԴԱՂԱՓԱՐԸ.

Ձի՛ք այլով խի՛ք փրկութիւն, զի եւ
ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից
տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցի
կեալ մեզ:

Գործք. Դ. 12:

Իւրաքանչիւր անհատ, հասարակու-
թիւն կամ ազգ իւր գերակայ գաղա-
փարն ունի: Գերակայ գաղափարն այն լուսաւոր
նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը
հասարակութիւնը կամ ազգը: Գերակայ գա-
ղափարը կարող է երբեմն սխալ լինել, բայց

և այնպէս լաւ է սխալ գերակայ ունենալ,
քան առանց գերակայի լինել: Առանց գերա-
կայի կեանքը մեռելութիւն, անիմաստ դա-
տարկութիւն կլինէր: Դրականութիւնն ու գե-
րակայ գաղափարները իրարից շատ հեռու են
ի հարկ է, բայց մարդկութեան սուրբ ձգտումն
ու նպատակն է եղել այդ անդունդի վերայ
մի հաստատուն կամուրջ ձգել: Մեր կեանքն
անխորհուրդ կլինէր, մի անդոյս լապտեր կը-
ղառնար առանց այդ ձգտման:

Գերակայ գաղափարները զանազան են.
արուեստի մէջ, օրինակ, գեղեցկութիւնն է,
գիտութեան մէջ՝ ճշմարտութիւնը, բայց ա-
մենաբարձր գերականն որ մարդկային ձգտման

էութիւնն է կազմում զա բարոյական գերականն է։ Որովհետեւ ինչ տեսակ գերակայ էլ վերցնելու լինինք առանց առնչութեան չէ բարոյական գերակայ գաղափարի հետ։ Դեղեցկութիւնը կամ ճշմարտութիւնը կեանքի միայն մի մասն են կազմում այն ինչ բարոյական իդէալը նորա ամբողջութեան էութիւնը։ Եթէ դիտականի իդէալը ճշմարտութիւնն է, նորա անձնաւորութեան ամբողջութիւնը գնահատելու համար՝ չենք մոռնում նորա բարոյական թերութիւններն ու արժանիքները։ Բարոյական գերական կեդրոնն է, միւսները օժանդակ գեր են կատարում բարոյականի կատարելութեան վերաբերութեամբ։

Մենք քրիստոնեաներս պարծենում ենք, որ քրիստոնէութիւնն է տուել աշխարհին փրկութիւն բերող գերական, և պատմութիւնը վկայում է, որ մենք իրաւունք ունինք։ Հեթանոս աշխարհի տուած գերականները անզօր էին ընդհանուր մարդկութեան մէջ կենդանութեան ոգի ներշնչելու։ Յունական քաղաքակրթութեան ամենափայլուն ժամանակն իսկ, երբ ազատութեան և ազնիւ կրթութեան գաղափարներն միութիւնը յոյն գերական էր, ազատ չէ մութ ստուերներէն։ Հպարտ ինքնազիտակցութիւնը իշխում է տեղական ստրուկ ժողովրդի վերայ և շրջապատող ազգերի ճակատին «բարբարոս» անունն է դրոշմում։ Իսկ յունական փիլիսոփայութեան առաջ բերած գերականները մարդկային իրական կեանքի և սրտի հետ ոչ մի կապ չունեցող, դժգոյն, անկենդան պատկերներ են և ոչ պատմական անձնաւորութիւններ։ Յունական փիլիսոփայութեան գերականները կարելի է մարմարեայ գեղեցիկ արձանների նմանեցնել որոնք սակայն իրենց բոլոր գեղեցկութեամբ հանդերձ՝ կեանք չունին։ Ստոյիկիան բարոյականութեան, օրինակ, պակասում էր այն կենդանի ոյժը՝ կրօնը, որ սառն արձանին ոգի պիտի ներշնչէր։ Սոկրատի, Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայութիւնների մէջ շատ ազնիւ գծեր կան, բայց այդ փիլիսոփայութիւնը միայն անհատ ընտրեալների սեպհականութիւն էր։ Հեթանոսն այն էր, որ հին մարդկութիւնը գրկուած էր կենսաբեր գերակայ գաղափարից։ Բայց և այնպէս ի դուր չէին հին քաղաքա-

կրթութեան ջանքերը։ Ըուսող շատ ազնիւ ճառագայթներ պիտի երևան դային այն կենսատու արեգակի մէջ, որ մեռնող մարդկութեան վերակենդանութեան շունչ տուց։ Կարելի է ասել ամբողջ հին աշխարհը կրկունքի մէջ էր, և նորա ծնունդը քրիստոնէութիւնն էր։ Բայց երկունքի այդ պտուղը փոքր ինչ ուրիշ բան էր, քան նորա մայրը։ Մինչև այդ ժամանակ մարդկութեան ձգտումն էր բարձրանալ, աստուածութեան հասնել, բայց մինչև «ի դժոխս» էր իջել։ Պէտք է գար չլուծն ժամանակին, երբ աստուածայինը մարդանար և ստորացած մարդկութիւնը գէպի Աստուած բարձրացնէր։ Յանձին Յիսուս Բրիստոսի մարդանում է աստուածայինը։ Այս իրողութեան մէջ է կենդանացած այն զօրութիւնը, որ քրիստոնէութեան բարոյական յաղթութեան զբաւականն էր։ Եստարի մէջ խորխորող մարդկութեան համար լուսոյ մի աստղ էր ծագել, կենդանի, իրական, բարոյական գերակայ, ամենքի համար տեսանելի, ամենքի համար շոշափելի։ Բրիստոնէութիւնը յունական փիլիսոփայութեան նման վերացական, կեանքի հետ առնչութիւն չունեցող տեսութիւններ չէր տալիս, կամ քաղաքական և ծիսական պայմաններով խճողուած աստուածաբանութիւն, այլ մաքուր կրօնական կեանք։ Կրօնը կեանք է և ոչ տեսութիւն։ Այդ կեանքը Աստուծոյ արքայութեան գաղափարն է, նորա զարգացումն ու կատարելութիւնը Աստուծոյ արքայութեան կատարելութիւնը։ Այդ արքայութեան մէջ Աստուծոյ կամքն է իշխում և այդ կամքի բովանդակութիւնն է սէրը։ Աստուծոյ արքայութիւնը անարատ անրիժ սիրոյ թագաւորութիւնն է։

Հին աշխարհը մի աշխարհ էր առանց ճշմարիտ սիրոյ, ուստի և ապականուեցաւ մեռաւ։ Բրիստոնէութիւնը ճշմարիտ սիրոյ կրօնն էր և եթէ նա աշխարհին փրկութիւն բերեց, այդ սիրոյ կեանքն էր։ Բրիստոս ինքն աստուածային պատու իրանների կեդրոնն ու էութիւնը սիրոյ պատու իրանն է համարում։ Սէր առ Աստուած և սէր առ ընկերն նոր վարդապետութեան հիմնաքարերն են։ Բրիստոսի վերջին խօսքը սիրոյ պատու իրանն է և նորան աշակերտ լինելու նշանը սէրն է։ «Եյասմ

գիտացնեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտ էր, եթէ սիրելիք զմիմեանս: Սոյն ոգին ենք տեսնում և առաքելական թղթերի մէջ: Ճշմարիտ աստուածասիրութիւնն ու եղբայրսիրութիւնը կը որդեապեման անբաժան զաղափարներ են: Ուստի և Պօղոս առաքեալը քրիստոնէական կեանքի էութիւնը սիրոյ մէջ է տեսնում և բարոյական գերակայի պատկերը իւր սիրոյ ներքոյի մէջ նկարագրում «Եթէ զիզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ եղէ, ես իրրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իրրեւ զծննդայս, որ զօգանջեն: Եւ եթէ ունիցիմ զմարդարէութիւնս և զիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն զիտութիւնս և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ ազքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ՝ յարումնս և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարձրամէ՝ ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ զրգոյն, ոչ խորհի զգար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւնս: ամենայնի տուէ, ամենայնի հաւատայ, ամենունին յուսայ, ամենայնի համբերէ»:

Ո՛րքան վսեմ և սրտառուչ պատկեր: Բրիստոնէական սիրոյ օրհներգն էր սա: Բայց Պօղոս առաքեալը իւր զիտից չէ հնարում այս պատկերը. երկնաւոր Վարդապետի աշակերտներին հալածող Սօղոսն այս առիթը զրել չէր կարող: Բրիստոսի հողին է այստեղ խօսողը: Բրիստոսի անձնաւորութեամբ գերուած, Սորա սուրբ սիրով վառուած առաքելի սրտից կարող էր բղխել այս սիրոյ երգ երգողը: Սա տեսութիւն չէ. անձնաւորեալ Սիրոյ պատկերն է, որ կենդանանում է նորա հոգու առաջ. շնամնողք ինձ եղիրո՛ք, որպէս և ես Բրիստոսի:

Այո՛, քրիստոնէութեան արեգակը Յիսուսի անձնաւորութիւնն է, որից կեանքի ծառագոյցներն էին հասել առաքեալների սրբտերի և այնտեղից ամբողջ մարդկութեան մէջ: Կրօնական անձնաւորութեան կատարելատիպն էր Սա, մի կատարելութիւն, որ մարդկային մաքի համար անըմբռնելի երկու ծայրահեղութեան ներդաշնակ միութիւն էր կազ-

մում անհասանելի բարձրութիւն և խոնարհութիւն, մեծութիւն և ծառայական պատրաստակամութիւն: Ազգերի պատմութիւնը քրքրենք, տալին ու վրայ անենք, չկայ սիրոյ այնպիսի կատարելատիպ, ինչպէս կեանքի Առաջնորդն էր: Դի՛նչ էր նորա ամբողջ կեանքի ընթացքը, եթէ ոչ անհուն սիրոյ մի շղթայ: Ո՛ր կարիք, նեղութիւն կար և Նա օգնութեան չէր հասնում, որ հիւանդին Սա չէր բժշկում, որ աղքատի համար Սա սիրտ չունէր, որ սղաոտին չէր մխիթարում: Ո՛ր մեղքի, ապականութեան զոհեր կային և Սա իւր ձեռքը չէր մեկնում նրանց բարձրացնելու: Թշնամի կնիք, որին Սա չէր սիրում: Սա մաքուր էր և անարատ քան լոյսը: Աստուած սէր է՝ և Սա այդ սիրոյ մարմնացումն էր: Սա սէր էր իւր Վարդապետութեան մէջ, Սա սէր էր իւր զօրծունելութեան մէջ, Սա սէր էր իւր չարչարանքի մէջ, Սա սէր էր և խաչի վերայ:

Կենսատու սերը քստալմե խաչի վերայից է հասում զկտի մարդկանց սրտերը, այնտեղ զարձենք մեր աչքը, այնտեղից սպասենք փրկութիւնը: Ռոյովհառեւ չիք այլով իւրեք վրկութիւն. զի և ոչ անուն այլ զոյ ի նեղքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ»:

Գարեգին Սարգիսեան:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

Ե Ի

ԱՂԱԵՏՆԵԻ ԽՆԵՄԵՏԵՐՈՒԹԵՆ ԳՈՐԾԸ.

Բազկայ՝ և հսոս ինձ ուսեշ,
ծարակեցի՝ և արաչից ինձ, օսուր էի՝
և ժողովեցի գիւ. մերկ՝ և զգեցուցից
գիւ. հիւանդ էի և ծոխ գիւ՝ ի բուն-
սի էի, և եկիմ առ իս:

Մատ. Ին. 35—36.

Չայ տղն այժմ՝ օրհասական վիճակի մէջ է, անցեալ տարիների տխուր դէպքերը վտանգի ենթարկեցին նորա գոյութեան խընդիրը: Հազարաւոր մարդիկ զրկուած ստա-